

ԱԼԹԵՐՏ ԽԱՌԱՏՅԱՆ. Հասարակական միտքը Զմյուռնիայի հալ պարբերական մամուլում (1840—1900). ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Երևան, 1995, 382 էջ:

Միջերկրականի ափին գտնվող նավահանգրստային Զմյուռնիա (Իզմիր) բաղաբեր XIX դարի կեսերին ուներ 210 հազար բնակիչ, որից՝ 107-ը հույներ, 52-ը՝ մահմեդական կրոնին պատկանողներ, 23-ը՝ հրեաներ, 12-ը՝ հայեր և 13. 700-ը՝ ներառյալներ և մայթացիներ: Եվ ահա 12 հազար հայ բնակիչ ունեցող այդ բաղաբեր հրատարակվել են մոտ 40 անուն հայերեն թերթեր և ամսագրեր, որոնցից էին «Արշալույս արարատյան», «Արփի արարատյան», «Ծաղիկ», «Արևելյան մամուլ», «Գարուն Հայաստանի», «Միություն», «Դաշինք», «Արշալույս» և այլն: Մամուլի էջերում և աղանձին գրքերով հրատարակվել են մեծ քանակությամբ թարգմանական և հայերեն գրքեր: Քաղաքում հին ժամանակներից գործել են հայկական դպրոցներ և թատրոն, ուստի պատահական չէ հայ գրականագետների և պատմաբանների՝ ղեկավար Զմյուռնիայի մշակութային ունեցած ուղադրությունը:

Պատմագիտության դոկտոր, հայ մամուլի լավ գիտակ Ա. Խառատյանը տարիների ընթացքում ղեկավարել է Զմյուռնիայում XIX դարում լույս տեսնող պարբերական մամուլում տրոհված հասարակական միտքը ուսումնասիրելու ուղղությամբ: Նա հետադարձ է հայերեն, ռուսերեն և օտար լեզուներով լույս տեսած գրականություն և մի շարք արխիվներում եղած վավերագրերը:

Աշխատության առաջաբանում հեղինակը անդրադարձել է Զմյուռնիայի հայության այնտեղ կուտակվելու պրոցեսի, բաղաբեր բնակչության սոցիալ-տնտեսական հարաբերությունների, պարբերական մամուլի լույս աշխարհ դալու հարցերին: Նա իրավացիորեն «Արշալույս արարատյանը» համարում է Թուրքիայում արապագրված առաջին կանոնավոր պարբերականը և ցույց է տալիս այդ թերթի ղեկավար և նրա կատարած աշխատանքը հայ ժողովրդի տարբեր հատվածները իրար հետ կապելու գործում: Այսպես նա անդրադառնում է Զմյուռնիայում լույս տեսած մամուլի օրգաններին ուղղություններին, նրանց պայքարին՝ ազգային սահմանադրություն, հայ ժողովրդի ազգային և սոցիալական ազատագրության, դպրոցի, գրականու-

թյան, արվեստի, թատրոնի ու աշխարհաբար լեզվի հարցերում:

Ա. Խառատյանը գնահատում է իրենից առաջ զմյուռնահայության պարբերական մամուլի մասին նախախորհրդային շրջանի հեղինակների աշխատությունները, նշում է նրանցում եղած բացթողումները և թերությունները: Այնուհետև նա բնութագրում է Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո լույս տեսած աշխատությունները և իրավացիորեն գտնում է, որ այդ ժամանակաշրջանում միայն դրվեց Զմյուռնիայի մամուլի պատմության, ախտեղ արծարծվող հասարակական-քաղաքական մտքի գնահատման իսկական հիմքը: Նա հանգամանորեն վերլուծում է արևմտահայ գաղափարական-քաղաքական հոսանքների բովանդակությունը, ցույց տալիս, որ զմյուռնահայ մամուլում այդ բովանդակությունը դրսևորվել է համակողմանիորեն:

Աշխատության առաջին գլխում ցույց է տրված Զմյուռնիայում պարբերական մամուլի առաջ գալու պրոցեսը և նրա էջերում ծավալված լուսավորչական և կուլտուրական շարժումը: Զմյուռնիայի հայ վաճառականների շրջիումները նվթական բաղաբերի հետ հարաբերություններ էին տալիս նրանց ոչ միայն ծանոթանալու այդ երկրների քաղաքների հետ, այլև ընկալելու այնտեղ եղած հոգևոր գանձերը, որը և մեծ ազդեցություն էր թողնում ոչ միայն քաղաքի հայ բնակիչների, այլև նրանց մտավորական խավի ծավալած լուսավորական աշխատանքների վրա:

Զմյուռնիայի հայ գաղութի կուլտուր-լուսավորական աշխատանքների վրա մեծ ազդեցություն ունեին նաև Վենետիկի և Վիեննայի Մխիթարյանների հրատարակած աշխատությունները: Դեռևս XVIII դարի վերջերից Զմյուռնիայում սկսեց գործել Մեսրոպյան վարժարանը, որը պահպանեց իր գոյությունը մինչև քաղաքի հայության ողբերգական վախճանը: Դպրոցում դասավանդվում էին անգլերեն, ֆրանսերեն, իտալերեն, հունարեն լեզուները, իսկ հայերեն ուսուցումը տարվում էր աշխարհաբար լեզվով: Սկսած 1820 թ. Զմյուռնիայում կար օրիորդաց վարժարանը, իսկ Մես-

րոպյանին կից 1841 թ. գործում էր տպարան։ Մենագրության մեջ կարևոր ընդհանրացումներ են արվում Ձմյունիայի տպարանների և հատկապես Տևտեյան եղբայրների տպարանի մասին, որտեղ տպագրվում էին ոչ միայն եվրոպական թարգմանական գրականություն, այլև հայ գրողների գործերը։ Քաղաքում բնակիչների մեջ մեծ աշխատանք էին ծավալում նաև հայկական «Սյունյաց», «Հայկազնյան», «Հաշտենից», «Աղբատասիրաց», «Հուսավորչյան», «Վասպուրական» (թատերական) և այլ ընկերությունները, որոնց լուսավորական աշխատանքի ոլորտն ընդգրկվել էր ոչ միայն քաղաքը, այլև նրանից ոչ շատ հեռու գտնվող հայկական գյուղերը։ 1836 թ. Ձմյունիայում ակալեցին առաջին թատերական ներկայացումների փորձերը, իսկ 1860 թ. սկսեց գործել «Վասպուրական» թատրոնը։

Հեղինակը չի մոռացել վերլուծել քաղաքում գտնվող սոցիալական շերտերի միջև եղած պայքարի պատմությունը։

Ա. Խառատյանը մանրամասն վերլուծել է առաջին հրատարակություններում եղած գաղափարական ուղղությունները։ Նրա աչքից չեն վրիպել 1840-ական թվականներին լույս տեսած «Հայրենասեր» թերթի արծարծած գաղափարները։

Երկրորդ զվարճում հեղինակը անդրադարձել է ազգային սահմանադրության շուրջը մղվող պայքարի արձագանքներին զմյունիայի մամուլի էջերում։ Նա խիստ բնագրատությամբ է ենթարկել ամերիկյան և թուրքական մի շարք պատմաբանների այն սխալ կարծիքը, թե իբրև այդ սահմանադրությամբ հայերը Օսմանյան կայսրության մեջ ստացան արտոնություններ, կադակներակցեց Կոստանդնուպոլսի Ազգային ժողովը, որը նրանք անվանում են «անկախ ժողովրդական պառլամենտ»։ Նա միաժամանակ անդրադառնում է 1859 թ. կադակերպով «Հաշտենից» միության օրգան «Միություն» ամսագրի մղած պայքարին հանուն սահմանադրության։ Միության օրգանի խմբագիրներն էին Մ. Վանանդեցին, Մ. Մամուրյանը, Սալալյանը, Գ. Կոստանդյանը, որոնք սահմանադրականներ էին։ Աշխատության այս մասում հեղինակը համառոտակի, սակայն ճիշտ շարադրում է վերլուծում է Մ. Մամուրյանի հայացքները ինչպես սահմանադրության, այնպես էլ հայ ժողովրդի ազատագրությանը վերաբերող հարցերում։ Առանձնապես կանգ է առնում դեմոկրատական ուղղությանը պատկանող «Ծաղիկ» պարբերականի տպագրած հոդվածների վրա։ Պարբերականը սուր բնագրատական մեթոդներ է պատահալու արևմտյան ռեակցիոն այն ուժերի կապակցությամբ, որոնք քծնում և խո-

նարհվում էին սուլթանական կառավարության պաշտոնյաների առաջ։ Հեղինակը մանրամասն դրվատում է ու վերլուծում Մ. Մամուրյանի, Ա. Հայկունու, Գր. Զիլինկիրյանի դեմոկրատական հայացքները։ «Ծաղիկը» շատ դպրեհրամ օսմանյան կարգերի դեմ զինված պայքարի կոչ էր անում և Զեյթունի 1862 թ. ապստամբությունը համարում էր ինքնապաշտպանական կռիվ՝ ընդդեմ թուրքական բռնակալության։ Դեմոկրատական ուղղությանը պատկանող այդ պարբերականը պաշտպանում էր իտալական ժողովրդի պայքարը իր ազատության համար։

Աշխատության երրորդ զվարճում Ա. Խառատյանը անդրադարձել է այն հոդվածների վերլուծությանը, որոնք վերաբերում են Արևմտյան Հայաստանին և մյուս հայ գաղթողներին։ Հոդվածների մեջ բացահայտվում է այն ծանր սոցիալ-տնտեսական վիճակը, որի մեջ գտնվում էին Թուրքիայի բնակիչները, դրանց թվում նաև հայերը, ցույց է տվել, թե ինչպիսի կախման մեջ էր գտնվում Թուրքիան՝ եվրոպական կապիտալիզմի։ Հեղինակը հանգստանալու անդրադառնում է Ձմյունիայում տոսնյակ տարիներ լույս տեսնող «Արևելյան մամուլի» և նրա խմբագիր Մ. Մամուրյանի կողմից բարձրացված հարցերին և նրա գաղափարներին։ Նա վերլուծում է Մ. Մամուրյանի «Հայկական նամականի» և նրա մեջ արծարծված ժամանակի առաջավոր գաղափարները։ Հեղինակը անդրադարձել է նաև այն հոդվածներին, որոնց մեջ արծարծված էր եվրոպայում և Ռուսաստանում 1870—80-ական թթ. տիրող բազմապատկան վիճակը։ Նշված տարիներին սուր կերպով դրված էր հայերին բուռն կերպով դրակոչելու հարցը։ Մ. Մամուրյանը դեմ էր այդ դրակոչին և դա՛նում էր, որ թուրքական բանակում հայ զինվորները կարեն նույն արհամարհված և անիրավունք վիճակում, որի մեջ գտնվում էին նրանք իրենց բնակավայրում։ Մ. Մամուրյանը պաշտպանում էր բալկանյան ժողովուրդների ազատագրական պայքարը, բնագրատում էր ցարիզմին, սակայն գտնում էր, որ նրա՝ Թուրքիայի դեմ մղած պատերազմները միաժամանակ ունեն ճնշված ժողովուրդներին ազատագրելու նպատակ։ Հեղինակը բնութագրել է նաև Հայկական Հարցի մասին հայ մամուլի էջերում 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո տպված հոդվածները։ Այս զվարճում իրավացիորեն բնագրատական խոսք է ասվում թուրքական մի շարք պատմաբանների (է. Ուրաս, Ի. Կարալ և այլք) հասցեին, որոնք գտնում են, որ Թուրքիայում ապրող բոլոր ժողովուրդները, որոնց թվում նաև հայերը, ապրում էին հաշտ ու խաղաղ և որ հայկական ազգային-ազատագրական շարժումները

և վրոպացիների և հատկապես Ռուսաստանի զորքման արդյունք էին:

Վերջին՝ շորթորդ գլխում հառապության անդրադարձել է հայ գրական լեզվի, գրականության, կրթության և մանկավարժության հարցերին: Այստեղ իրենց արտահայտությունն են գտել Մ. Մամուրյանի, Ա. Հայկունու և այլոց հայացքները այդ ժամանակի հայկական դրությունների մասին: Առաջավոր մտավորականները գտնում էին, որ դպրոցը պետք է անջատ լինի եկեղեցուց և պայքարի դրոշ էին պարզել դպրոցի մասին իր դարն ասլորած մտածողության դեմ:

Ամփոփելով ասելը, որ ուշագրավ մենագրությունը հեղինակի երկար տարիների աշխատանքի արդյունք է և ոչ միայն գրված է փաստերի լեզվով, այլև դրանք վերլուծված են ըստ ամենայնի և հեղինակի կողմից արված են ճիշտ երակացություններ: Ուսումնասիրության մեջ ամենայն խորությամբ բացահայտված է հասարակական միտքը Զմյուռնիայի հայկական պարբերական մամուլում՝ հայկական իրականության մեջ եղած իր տարրեր հոսանքներով հանդերձ: Հեղինակը կարողացել է սեղանի վրա դնել մի կուռ աշխատություն, որը անմիջականորեն կապվում է այնպիսի երկու խոշոր գիտական և քաղաքական պրոբլեմների հետ, որոնց մշակումը կշարունակվի դեռ երկար տարիներ: Դրանցից մեկը Արևմտյան Հայաստանի և արևմտահայության հանգամանալի և ամբողջական պատմության շարադրանքն է, որը դեռևս չի իրականացվել: Մյուսը՝ Օսմանյան կայսրության ամբողջական պատմությունն է, որի ստեղծումն անհնարին է առանց այդ տևություն շրջանակներում գտնված ազդերի մամուլի նյութերի և գրականության ու նրանց ներկայացուցիչների գործոնների վերահաման: Այս տեսակետից դրբի հեղինակը կատարել է նշանակալի աշխատանք՝ նրանում օգտագործելով բազմաթիվ աղբյուրներ, արխիվային նյութեր, համապատասխան մասնագիտական գրականություն և մամուլ: Աղբյուրագիտական հարուստ բաղադրի հիման վրա նրան հաջողվել է լուծել իր առջև դրված գիտական խնդիրները՝ տալով համոզիչ պատասխաններ բոլոր հիմնական հարցերին: Նա

ներկայացրել է դմյունահայ պարբերական հրատարակությունների 60-ամյա զարգացման հիմնական փուլերը, նրանց զաղափարական էվոլյուցիան և այն պրոբլեմները, որոնք բնութագրական են Զմյուռնիայի հայ գաղթօջախի, բոլոր արևմտահայերի համար, ինչպես և անցյալ դարի երկրորդ կեսի Օսմանյան կայսրության հասարակական կյանքի և պատմության համար:

Հարկ է ասել, որ մենագրության մեջ որոշակի տեղ են գրավել Զմյուռնիայի հայ գաղթօջախի սոցիալական բնութագրի հետ կապված հարցերը, ինչպես նաև Ռուսաստանի հետ առևտրատնտեսական առնչությունները: Հեղինակը կոնկրետ փաստերի հիման վրա նշել է, որ սոցիալական տեսանկյունից գաղթօջախն ուներ բազմաշերտ բնակչություն: Այն կազմված էր արհեստավորներից, վարձու աշխատողներից, մանր ու միջակ առևտրականներից և առևտրական խոշոր բուրժուազիայից: Դեռևս XVII դարում դմյունահայ վաճառականությունը կարևոր դեր էր կատարում փոքրբաժնիկական ապրանքափոխանակման հանգրվանն երում: Պատահական չէր, որ 1717 թ. Պետրոս Առաջինը դմյունացի վաճառականներ Ապրոյան եղբայրներին հատուկ արտոնություններ շնորհեց՝ Ռուսական կայսրության սահմաններում ազատ առևտուր անելու համար:

Աշխատության կարևորությունը պայմանավորված է այն բանով, որ գիտական շրջանառության մեջ են դրվել սկզբնաղբյուրի արժեք ունեցող արևմտահայ պարբերական մամուլի նյութերը և տրվել է դրանց ինքնատիպ մեկնաբանությունը: Բազմաթիվ փաստերով մենագրության հեղինակը ցույց է տալիս արևմտահայության թշվառ վիճակը: Դրա հետ միասին գրքում նշված է, որ արևմտահայ դեմոկրատական մամուլը և գրականությունը այդ դրությունից ելք էին փնտրում ազատագրական պայքարի ծավալման, քաղաքական ազատության մեջ: Մատթև Մամուրյանի խոսքերը, թե հարկավոր է մեռնել «ոչ կոնակ վերք առնելով, այլ ճակատ» և ղենքը ձեռքին՝ ազատության մարտիկներին ուղղված կոչ էր: Առանձին հայ պարբերականներ փառաբանում էին Գարիբալդու զխավորած շարժումը, լու-

սաբանում զեյթունցիների հերոսական պայքարը թուրքական բռնակալության դեմ: «Ծաղիկը», օրինակ, Լվրոպական շարժումների լուսաբանության հետ մեկտեղ արձագանքում էր նաև Ռուսաստանում տեղի ունեցող դեմոկրատական շարժումներին, համակրանքով գրում Մ. Նալբանդյանի մասին և այլն:

«Հայրենասերը» և այլ պարբերականներ հայ ժողովրդի ազատագրումը տեսնում էին Ռուսաստանի աջակցության մեջ, լայնորեն լուսաբանում հասարակական շարժումներն այդ երկրում, ընթերցողին ծանոթացնում ռուս հեղինակների ստեղծագործություններին: «Արևելյան մամուլը» ընդարձակ տեղեկություններ էր տալիս թուրքական իշխանությունների կողմից Բոսնիայում և Ջևոնդորիայում կատարվող անասելի հարստահարությունների մասին, խրախուսում բալկանյան ժողովուրդների ազատագրական պայքարը: Առաջ էր քաշվում այն տեսակետը, որ հայերը տնտեսական ու մշակութային վերելքի որոշ նախապատրաստական աշխատանքից հետո պարտավոր են հետևելու նրանց օրինակին:

Ա. Խառատյանը մատնանշել է, որ հայերը Ձմյունեիայում հաստատվել են XI դարում,

իսկ նրանց ողբերգական մալրամուտը տեղի է ունեցել XX դարի երկրորդ տասնամյակում: Այո, 1922 թ. քեմալականների կողմից բաղամաղարյա քրիստոնեական քաղաքի կործանումը, միաժամանակ տեղի հունական և հայկական քաղաքակրթությունների կործանումն էր, հայ մշակութային կարևոր հանգրվանի բարբարոսական ոչնչացումը:

Հեղինակը կատարել է մեծածավալ ու շնորհակալ աշխատանք, սակայն նկատելի են մի շարք թերություններ: Նրա ուշադրությունից լրիվացել են զմյուռնահայ պարբերականների առանձին հեղինակներ: Եթե այդ բացը լիներ, ապա յուրաքանչյուր պարբերական կունենար ամբողջական բնութագիր: Ա. Խառատյանը իր ուշադրությունը բեկեռելով հայ մամուլի հիմնահարցերին, ինչ-որ չափով անտեսում է պարբերականների պատմությունը:

Ընդհանուր առմամբ մենագրությունը նոր ներդրում է հայ պատմագիտության, մասնավորապես արևմտահայ մամուլի պատմության մեջ:

Պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր
Ս. Ս. ՍՏԵՓԱՆՅԱՆ